

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ՀԱՎԱԳՈՒՅՆ
ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԸ, «ՀԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ»,
«ՀԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԵՎ «ՀԱՎԱԳՈՒՅՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ՍՏՈՒԳԱՏԵՍՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի,
Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728
հրամանագրի 1.6-րդ , 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն
կարգադրության պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի
Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հավագույն մարզական
ընտանիք» մրցույթը ,«Հավագույն մարզական բակ», «Հավագույն
գյուղական մարզական համայնք» և «Հավագույն քաղաքային մարզական
համայնք» ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի
կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի
Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հավագույն մարզական
ընտանիք» մրցույթի մարզային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝
համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի
Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հավագույն մարզական
ընտանիք» մրցույթը, «Հավագույն մարզական բակ», «Հավագույն
գյուղական մարզական համայնք» և «Հավագույն քաղաքային մարզական
համայնք» ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու
Ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ Ս. Յոգոլակյանին՝
միջոցառումների անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել
սույն կարգադրության և նրա հավելվածների, միջոցառումների կանոնակարգերի
բազմացումը և առաքումը մարզի համայնքներ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
համայնքների ղեկավարներին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության
Նախագահի մրցանակի համար «Հավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
«Հավագույն մարզական բակ»,«Հավագույն գյուղական մարզական համայնք»
և «Հավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսներին բնակչության
ու կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին՝

1) մրցումների մարզային փուլում հաղթող ճանաչված լավագույն մարզական
ընտանիքներին պարգևատրել հավաստագրերով.

2) ապահովել մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի մասնակիցների և
ներկայացուցիչների մասնակցության հետ կապված ծախսերը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ